ՀԻՆԵՐՈՐԴ ՄԱՍ

ՈՒԽՏԱՏԵՂԻՔ ՀԱՄԱԽԻՈՅ ԹԵՄԻ

Համախւոյ վիճակումն կան և քանի ուխտատեղեր, որոց տեղացիք "Սուրբ" անուանեն, որոց առաջինը և նշանաւորն է Քարքանջի սուրբ Սահակի մատուռն։

Այս ուխտատեղին շինուած է սուրբ Սահակ նահատակ վարդապետի գերեզմանի վրայ՝ քարքանջ հայաբնակ գիւղի մօտ, որոյ շրջապատն է և գերեզմանատունն գիւղացւոց։

Մի ահագին խաղողի որթ (վազ) շրջապատել էր մատուռը և ծածկել էր տանիքը ց1891 թիւն։

Մատուռը շինուած է քարուկիր կամարակապ մի սեղանով՝ առանց խորանաց, որոյ մօտ կան և սենեկաց և սեղանատան շինուածոց աւերակներն։

Ըստ պատմութեան գիւղացւոց, սուրբ Սահակին թուրքերը նահատակելով և այրելով Համախւոյ մօտ 5 վերստ հեռաւորութեամբ, դէպի հարաւ գտնուած "Փիր Սահակ"[1]) անուն գետեզրին և նոյն գիշերն Քարքանջեցի Խաչիկ՝ անուանեալն Գէօկչայ[2]) այրեցածի մոխիրը լցրել է պարկը և տարել է Քեար-

---

[1]) Այժմ Փիր-Սահաթ անուանեն Պարսիկք։ Բայց Համախումն Հաւալիենց բակի մէջ եւս կայ ուխտատեղի, Փիր-Քիւլ օյիւչ անուամբ, որ նշանակէ այրուած սրբի տեղ։

[2])Այս Գօդչայն մի քաջ հակայ և յաղթանդամ մարդ լինելու պատճա-